

Իսկ իրենց գլխաւոր կանոններն ասոնք են .

Ա . Տղայ մը աս դպրոցներէս մէկը մտնելու համար՝ պէտք է որ արհեստաւորի մը աշակերտ ըլլայ . անոնցմէ դուրս ոչ ոք կրնայ իրաւունք ունենալ :

Բ . Ըմէն տղայ իրիկունը խանութէն ազատ եղածին պէս դպրոց պիտի երթայ , առանց ուրիշ տեղուանք սնտարնալու :

Գ . Ըմէն օր ճիշդ հաշիւ պիտի բռնուի թէ տղայ մը որ օր եկեր է՝ որ օր չէ եկած . ուստի տղան ամէն օր դպրոց մտնելուն պէս՝ իր անունը նշանել պիտի տայ :

Դ . Տղաքը դպրոցին մէջ պիտի սորվին գրել , կարդալ , քրիստոնէական վարդապետութիւն , մարդավարութիւն , թուաբանութիւն , ուրուագրութի ու երաժշտութիւն :

Ե . Ըմէն շաբաթ ու տօներու նախընթաց իրիկունը իրենց համար սահմանուած եկեղեցին կամ մատուռը պիտի ժողվուին իրենց աղօթքը կատարելու , և քրիստոնէական վարդապետութեան ու բարի վարուց քննութիւնը անելու :

Զ . Արեւի ու տօն օրերը առաւօտը ելլելէն ետեւ շիտակ եկեղեցին պիտի երթան , ու ինչուան որ ամէնքը ժողվուին՝ անոնցմէ մէկը հոգեւոր գիրք մը կը կարդայ . ուրիշներն ալ մտիկ պիտի ընեն : Երբոր ամէնքը ժողվուին , իրենց առաւօտեան աղօթքը ձայնով կատարելէն ետեւ պատարագի մը ներկայ պիտի ըլլան , ու յետոյ իրենց համար սահմանուած տեղը միաբան խաղան ու զուարճանան : Իսկ իրիկունը երեկոյեան աղօթքէն ետեւ դարձեալ դպրոց պիտի դառնան ու իրենց բանին հետ ըլլան : Ըմիսը մէյմը պարտրկան են տղաքը խոստովանելու ու հաղորդուելու :


Է . Իրեք ամիսը մէյմը առանձին քրննութիւն , իսկ տարին մէյմը ընդհանուր քննութիւն պիտի ըլլայ տղոց բարի վարքին և ուսմանց մէջ ըրած յառաջադիմութիւններն իմացուելու համար . և անոնց համեմատ վարձք պիտի առ-

նուն . առաճնին աւելի զգեստեղէն կամ իրենց արհեստին վերաբերեալ բան մը պիտի ըլլայ :

Վարձեմ թէ աս կանոնները ընդհանրապէս մեր ազգին ալ կրնան յարմարիլ քիչ շատ փոփոխութեամբ , որ փորձով կրնայ իմացուիլ . միայն չորրորդը ասանկ կրնայ ըլլալ . Տղոց սորվելու ուսմունքներն ըլլան գրել , կարդալ , աշխարհաբառ բան շարագրել , թուաբանութիւն , քաղաքավարութիւն , բարոյական իմաստասիրութիւն ու քրիստոնէական վարդապետութիւն . կամ թէ որ ժամանակ ըլլայ՝ քիչ մը քաղաքական ու բնական աշխարհագրութե ու բնական պատմութեան գիտելիք :

Միջա ասանկով կը լուծուի նաև անոնց տարակոյսը որ կ'ըսէին . Վիտութիւնը ինչ ընեմ , տղաս արհեստ մը սորվի որ ստակ վաստըկի . վասն զի ասով արհեստ ալ կը սորվին , անկէց վաստըկած ստակնին ալ չեն կորսուցնցըներ խաղի տալով , ու նաև միանգամայն բարի ու բաւական ուսումնական անձինք կ'ըլլան :

Ըս դպրոցներուս վրայ աս համառօտ տեղեկութիւնս տալէն ետքը , ալ հարկաւոր չենք սեպեր՝ մէկիկ մէկիկ անոնց օգուտներն համրել ու գովել , ինչպէս որ աս օգուտները Խտալիոյ մէջ կը տեսնենք ընդհանրապէս ամէն արհեստաւորաց վրայ . աս կը փափաքինք որ մեր ազգն ալ նոյն օգուտները փոխանակ ուրիշներուն վրայ լսելու՝ ինքն իր վրայ աչքով ալ տեսնէ և ուրախանայ :



ՆԿԱՐԱԳԻՐ

Ս Ի Ժ ա Բ ա ն ա ս ե ր Ժ ա ր Գ :

Ս Ի Ժ Ա Բ Ա Ն Ե Լ Ո Ւ ս ե ր ր ան ի մ ա ն ա լ ի ա խ տ Ե ր ո շ ն մ է կ ն է : Ս ար ր Կ ա յ որ Կ ա ր ծ ե ս թ է խ օ ս ա կ յ ու թ է ն է ն հ ա մ չ ա ո շ ն Ե ր թ է որ ու ր ի շ ի չ ը ը ն Գ Գ ի մ ա բ ա ն է . Կ ա ր ծ ե ս թ է կ ր ս ա ր ա ս է ու ր ի շ ի մ է կ խ օ ս Ե ր բ ա ն է լ ու որ վ է ճ բ ա ն ա յ , մ տ ք ի ն վ ր ա յ ա լ չ ը լ լ ա յ :

բառին վրայ . Ինչպէս որ վիճաբանու-  
թիւններուն շատը բառի վրայ է՝ մէկ-  
մէկու միտք չհասկընալէն կամ հասկը-  
նալ չուզելէն : Մանաւանդ երբոր մէյմը  
վիճաբանութիւնը տաքնայ , կարծիքի  
տարբերութիւնը մէկդի կը դուռի , ու  
հասարակօրէն բառերու վրայ կը պտը-  
տի վէճը :

Վիճաբանութեան հիմը ինքնահա-  
ւանութիւնն է . բայց վիճաբանասէրը  
ինքզինքը ինքնահաւանութենէ շատ  
հեռու ցուցնելու համար , վիճաբանու-  
թիւնն է գիտութիւնները ծաղկեցընու-  
ողը , կ'ըսէ . վիճաբանութեամբ ճշմար-  
տութիւնը դուրս կ'ելլէ , ու ասոր նման  
պատրուակներ , չմտածելով թէ որչափ  
տարբեր բան է ճշմարտութիւն փնտուե-  
լու խօսակցութիւնը՝ կիրքով վիճաբա-  
նելէն , ու չգիտնալով որ մարդս կրից  
մէջ ոչ բան կը հասկընայ , և ոչ բան մը  
կրնայ հասկըցընել : Արբոր երկու հոգի  
տաքցած կասկարմիր կտրած՝ մէկմէկու  
հետ կը վիճաբանին , խօսքեր կ'ելլէ բեր-  
նեմէն որ ամենեւին խնդիրէն դուրս  
է . հանդարտ կը սկսին , ետքը բանը  
կը տաքնայ . կռուող կատուններու կը նը-  
մանին , միաւ միաւով կը սկսին՝ մումը-  
ռով կը լմընցընեն . թէ որ թաթեր-  
նին ալ մէկմէկու վրայ չվերցընեն , լե-  
զունին իրարու կը հասցընեն : Արկուքն  
ալ մտքերնին դրած՝ որ իրենց ըսածն է  
ճշմարիտը , մէկզմէկ խօսք չհասկըցող  
կը կանչեն . թէ որ փնտուես թէ որուն  
ըսածն է ճշմարիտը , շատ անգամ և ոչ  
մէկունն է . անոր համար վիճաբանու-  
թենէն ետքն ալ իւրաքանչիւրը զինքը  
յաղթող կը համարի . այն ալ ո՛ն ալ  
յաղթող կ'ըլլայ : Արկուքն ալ իրարու  
խօսքը չէ թէ հասկընալու համար կը  
լսեն , այլ դէմը խօսելու . անանկ որ  
բանը ամօթի կը հեծնայ՝ ով որ առաջ  
լսելու ըլլայ : Մտածէ ուրեմն թէ երբ-  
որ մարդս չլսելու համար խօսելու ըլ-  
լայ , ան խօսածին մէջը ինչ խելք կ'ըլ-  
լայ . թէ որ երկայն մտածելէն ետքն  
ալ շատ անգամ մարդուս խօսածը խել-  
քով բան մը չէ , հապա թէ որ կիրքով  
ու առանց մտածելու հարկաւորի ետեւէ

ետեւ խօսքերը բերել՝ վերջին խօսողը  
ինք ըլլալու համար , ինչ համ հոտ կ'ըլ-  
լայ ան խօսածին մէջ :

Արզարմանաս երբեմն որ խելացի  
մարդիկ բարակ բաներու խելք հասցը-  
նելէն ետեւ՝ ինչպէս իրարու ըսածը չեն  
հասկընար : Պատճառը յայտնի է . վասն  
զի ան բարակ բաները՝ հասկընալու հա-  
մար կը լսեն կամ կը կարդան . իսկ վի-  
ճաբանելու ատեն՝ մէկմէկու խօսքը  
դէմը խօսելու համար կը լսեն , ան ալ  
թէ որ լսեն . ինչու որ իրարու ատեն ալ  
չեն տար խօսքերնին լմընցընելու . ան-  
կաճնին ու լեզունին մէկտեղ կ'ուզեն  
բանեցընել . չես գիտեր ով է խօսողը՝  
ով է լսողը . աւելի ստոյգը ան է որ լը-  
սող ամենեւին չկայ , երկուքն ալ իբրև  
թէ պատերուն հետ խօսէին . ներս  
մտնողը կը կարծէ թէ փորձ կ'ընեն՝ ո-  
րուն ձայնը աւելի բարձր է ու ով ա-  
ւելի կրնայ պոռալ :

Արջապէս վիճաբանասէր մարդը  
ինքզինքը ծիծաղելի կ'ընէ , երբոր բե-  
րանը ուրիշ խօսք չիմար , ու յաղթուի-  
լը յայտնի չընելու համար՝ բերած պատ-  
ճառներդ բաւական չեն համոզելու կ'ը-  
սէ : Սուգէ որ ամէն բանին պատճառը  
մաթեմատիքական ապացուցի պէս ըլ-  
լայ , ու երկու անգամ երկուքդ չորս ը-  
նելու պէս ըլլայ՝ որ զինքը պապանձե-  
ցընէ . կարելի է որ վիճաբանութեան  
մէջ նաև անոր վրայ ալ տարակուսի :  
Մարդ եղած է որ ժամը քանին ըլլա-  
լու վրայ տաքցած վիճաբանելու ատենը  
արևուն մտնալն ալ տեսնելով՝ արևը կը  
սխալի ըսած է :

Ըստ դժուարաբժշկելի կ'ըլլայ մար-  
դուս վրայ աս ախտը , թէ որ պզտի-  
կուց չիջանայ ինքզինքը կրթել : (Ս) Է  
որ մարդս աս ախտէն բժշկելու դեղ մը  
կայ նէ՝ աս է որ գիտնայ թէ մեծ իմաս-  
տութեան նշան է մարդուս իր կարծի-  
քը փոխելը : Ճշմարտութեան գիտու-  
թիւնը կը պահանջէ որ մարդս շատ ան-  
գամ աս զոհս ընէ . ու աս զոհս ընող-  
ներն են որ ան պանծալի անուանը ար-  
ժանի կ'ըլլան , ճշմարտասէր ըսուելու :

\*